

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ, ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է ՀՀ Նախագահի 2002 թվականի մարտի 21-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ ՆԿ-1075 կարգադրությամբ ստեղծված՝ ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով մշտապես գործող հանձնաժողովի աշխատանքի կազմակերպման կարգը:
2. Սույն կանոնակարգի իմաստով՝
 - 1) **Հանձնաժողովը** ՀՀ Նախագահի 2002 թվականի մարտի 21-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ ՆԿ-1075 կարգադրությամբ ստեղծված խորհրդակցական մարմինն է,
 - 2) **Հանձնաժողովի նախագահը** ՀՀ կենտրոնական բանկի նախագահն է,
 - 3) **Հանձնաժողովի քարտուղարը** ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարն է,
 - 4) **Հանձնաժողովի անդամները** ՀՀ Նախագահի 2002 թվականի մարտի 21-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ ՆԿ-1075 կարգադրության 2-րդ կետով սահմանված գերատեսչությունների ներկայացուցիչներն են,
 - 5) **Աշխատանքային խումբը** Հանձնաժողովին կից ձևավորված աշխատանքային խումբն է:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանձնաժողովի խնդիրներն են.

- 1) ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ռիսկերի բացահայտմանն ու գնահատմանն ուղղված գործողությունների համակարգումը, ինչպես նաև դրանց արդյունքների արդիականության ապահովումը,
 - 2) ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ռիսկերի գնահատման արդյունքներն արտացոլող միասնական պետական քաղաքականության մշակումը,
 - 3) Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ներպետական և միջազգային համագործակցության համակարգումը,
 - 4) ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ համակարգի կատարելագործմանն ուղղված և ՀՀ Նախագահի 2002 թվականի մարտի 21-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ ՆԿ-1075 կարգադրությանը չհակասող այլ խնդիրների իրագործումը:
4. Հանձնաժողովը սույն Կանոնակարգի 3-րդ կետով սահմանված խնդիրների իրագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառնությունները.
- 1) Սույն Կանոնակարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ռիսկերի բացահայտման և գնահատման մեթոդաբանության մշակման գործընթացի համակարգումը,
 - 2) Սույն Կանոնակարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ռիսկերի բացահայտման և գնահատման գործընթացի համակարգումը,
 - 3) Սույն Կանոնակարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ռիսկերի բացահայտման և գնահատման արդյունքների վերաբերյալ ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարում ներգրավված գերատեսչությունների, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաշվետվություն տրամադրող անձանց և դրանց վերահսկող մարմինների իրազեկման համակարգումը,

- 4) Սույն Կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման գործընթացի համակարգումը,
- 5) Սույն Կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետից բխող՝ ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարում ներգրավված գերատեսչությունների ոլորտային ռիսկահենք քաղաքականությունների քննարկումը,
- 6) Սույն Կանոնակարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ռիսկերի բացահայտման և գնահատման արդյունքներից, ինչպես նաև սույն Կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված միասնական պետական քաղաքականությունից բխող միջոցառումների (գործողությունների) ծրագրերի քննարկումը և դրանց իրականացման գործընթացի համակարգումը,
- 7) ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկումը, դրանց վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների տրամադրումը,
- 8) ՀՀ պետական մարմիններից ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարին առնչվող անհրաժեշտ տեղեկատվության խնդրարկումը,
- 9) Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով Աշխատանքային խմբի ձևավորումը,
- 10) ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ համակարգի կատարելագործմանն առնչվող և ՀՀ Նախագահի 2002 թվականի մարտի 21-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ ՆԿ-1075 կարգադրությանը չհակասող այլ գործառույթների իրականացումը:

**ԳԼՈՒԽ 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5. Հանձնաժողովի նախագահը՝

- 1) Ղեկավարում է Հանձնաժողովի գործունեությունը,
 - 2) ՀՀ Նախագահին է ներկայացնում Հանձնաժողովի նախապատրաստած առաջարկությունները (որոշումները), դրանց կատարման հաշվետվությունները և Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող տեղեկատվությունը,
 - 3) Նշանակում է Հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը, ժամը և առաջարկում օրակարգը,
 - 4) Հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը.
 - 5) Ապահովում է Հանձնաժողովի աշխատանքների լուսաբանումը և հրապարակայնությունը,
 - 6) Անհրաժեշտության դեպքում իր նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ Հանձնաժողովի նիստերին մասնակցելու համար հրավիրում է պետական մարմինների, գիտահետազոտական և կրթական հաստատությունների, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,
 - 7) Անհրաժեշտության դեպքում իր նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ որոշում է կայացնում նիստը դռնփակ անցկացնելու մասին,
 - 8) Հանձնաժողովի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում,
 - 9) Ներկայացնում է Հանձնաժողովն այլ մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում:
6. Հանձնաժողովի անդամները՝
- 1) Մասնակցում են Հանձնաժողովի աշխատանքների պլանավորմանը և նիստերի օրակարգերի ձևավորմանը, հարցերի քննարկմանը, ներկայացնում են առաջարկություններ,
 - 2) Մասնակցում են Հանձնաժողովի ներքո գործող Աշխատանքային խմբի ձևավորմանը,
 - 3) Իրականացնում են իրենց կողմից Հանձնաժողովի նիստերին ներկայացվող փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման աշխատանքը,
 - 4) Ապահովում են իրենց գերատեսչությունների իրազեկվածությունը Հանձնաժողովի կայացրած որոշումների վերաբերյալ,

- 5) Հանձնաժողովի գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ ՀՀ նախարարություններից, գերատեսչություններից և այլ կազմակերպություններից ու անձանցից պահանջում և ստանում են սույն Կանոնակարգի 4-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված անհրաժեշտ տեղեկատվությունը,
- 6) Անձամբ կամ իրենց կողմից ներկայացված Աշխատանքային խմբի անդամի միջոցով, իրենց լիազորությունների շրջանակներում, նպաստում են փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում ՀՀ-ն արտասահմանյան պատկան կառույցներում ներկայացնելու, այդ կառույցների պաշտոնական պատվիրակությունների հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ իրենց գերատեսչության ներկայացուցիչների հետ հանդիպումներ կազմակերպելու աշխատանքներին,
- 7) Սույն կանոնակարգի պահանջներից ելնելով և սահմանված կարգով, իրենց պաշտոնական պարտականությունների շրջանակներում իրականացնում են ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում արդյունավետ և համատեղ գործունեություն, ինչպես նաև ՀՀ օրենսդրության շրջանակներում վերահսկում են ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի աշխատանքները:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Ըստ անհրաժեշտության կարող են հրավիրվել նաև Հանձնաժողովի հեռակա նիստեր:
8. Հանձնաժողովի հերթական նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ Հանձնաժողովի նախագահի կողմից:
9. Հանձնաժողովի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Հանձնաժողովի նախագահի կամ անդամներից մեկի պահանջով:
10. Հանձնաժողովի հեռակա նիստ կարող է հրավիրվել Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի բոլոր անդամների համաձայնությամբ:

11. Հանձնաժողովի նիստը, բացառությամբ սույն Կանոնակարգի 10-րդ կետով սահմանված դեպքի, իրավազոր է, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը:
12. Հանձնաժողովի նիստերի օրակարգը ձևավորվում է Հանձնաժողովի նախագահի կողմից՝ Հանձնաժողովի անդամների առաջարկությունների կամ նիստ գումարելու մասին Հանձնաժողովի կայացրած որոշումների հիման վրա:
13. Նիստերի օրակարգը և քննարկվող հարցերին առնչվող փաստաթղթերը Հանձնաժողովի անդամներին են ուղարկվում նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:
14. Հարցերի քննարկման արդյունքում հանձնաժողովի կողմից ընդունվող որոշումները խորհրդատվական բնույթ ունեն և իրենցից ներկայացնում են առաջարկություններ՝ ներառյալ ՀՀ Նախագահին ներկայացվող:
15. Հանձնաժողովի որոշումները, բացառությամբ սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված դեպքի, ընդունվում են բաց բանավոր քվեարկությամբ, նիստին մասնակցող Հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Եթե Հանձնաժողովի որևէ անդամ Հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա այն կցվում է Հանձնաժողովի որոշմանը:
16. Հանձնաժողովի նիստերին կարող են մասնակցել նաև հրավիրված անձինք: Հրավիրված անձանց ցանկը սահմանվում է Հանձնաժողովի տվյալ օրվա նիստի օրակարգով:
17. Հանձնաժողովի հեռակա նիստ անցկացնելու նախաձեռնության դեպքում Հանձնաժողովի քարտուղարությունը հեռակա նիստ անցկացնելու առաջարկության վերաբերյալ գրություններ է ուղարկում Հանձնաժողովի անդամներին: Գրության վերաբերյալ առարկություններ սահմանված ժամկետում չստանալու դեպքում Հանձնաժողովի նախագահը որոշում է կայացնում Հանձնաժողովի հեռակա նիստ անցկացնելու մասին:
18. Հանձնաժողովի հեռակա նիստ անցկացնելու վերաբերյալ որոշման ընդունումից հետո Հանձնաժողովի քարտուղարությունը նիստի օրակարգը ուղարկում է Հանձնաժողովի անդամներին: Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ սահմանված ժամկետում առարկություններ չստանալու դեպքում օրակարգը համարվում է ընդունված:
19. Հանձնաժողովի հեռակա նիստի օրակարգում ընդգրկված հարցերի առնչությամբ Հանձնաժողովի առնվազն մեկ անդամի առարկության

դեպքում Հանձնաժողովի նախագահը որոշում է կայացնում Հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրելու մասին:

ՊԼՈՒԽ 5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Հանձնաժողովի նիստերը վարում է Հանձնաժողովի նախագահը, ով կազմակերպում է մտքերի փոխանակություն և քվեարկության է դնում Հանձնաժողովի որոշումների նախագծերը:
21. Հանձնաժողովի նիստի սկզբում Հանձնաժողովի նախագահն ըստ հաջորդականության ընթերցում է օրակարգում ընդգրկված հարցերը, որից հետո լրացուցիչ հարցեր ընդգրկելու համար ծայն է տալիս Հանձնաժողովի անդամներին:
22. Օրակարգում ընդգրկված հարցերը զեկուցվում են հարցի քննարկումը նախաձեռնած Հանձնաժողովի անդամի կամ նրա ներկայացուցչի կողմից՝ ըստ սահմանված հաջորդականության:
23. Յուրաքանչյուր հարցի զեկուցումից հետո Հանձնաժողովի անդամները և հրավիրված անձինք իրավասու են հարցեր տալ զեկուցողին:
24. Հարց ու պատասխանի ավարտից հետո Հանձնաժողովի նախագահը կազմակերպում է մտքերի փոխանակություն, որի ժամանակ ծայն է տրվում Հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի անդամների ելույթներից հետո Հանձնաժողովի նախագահն ամփոփում է քննարկման արդյունքները:

ՊԼՈՒԽ 6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

25. Հանձնաժողովի նիստերի քարտուղարությունն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը (այսուհետ՝ Հանձնաժողովի քարտուղարություն):
26. Հանձնաժողովի քարտուղարությունը՝
 - 1) իրականացնում է Հանձնաժողովի նիստերի կազմակերպմանն առնչվող աշխատանքներ,
 - 2) Նախապատրաստում և Հանձնաժողովի անդամներին է ուղարկում նիստի օրակարգը և կից նյութերը,
 - 3) Անհրաժեշտության դեպքում կազմում է Հանձնաժողովի կողմից ընդունվելիք որոշումների նախագծերը,
 - 4) Կազմակերպում է Հանձնաժողովի նիստերի արձանագրումը,

- 5) Հանձնաժողովի անդամներին է ուղարկում նիստերի արձանագրությունները,
 - 6) Կազմակերպում է Աշխատանքային խմբի հանդիպումները:
27. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները նիստին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրվում են Հանձնաժողովի նախագահի կողմից, որից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են Հանձնաժողովի անդամներին:
 28. Հանձնաժողովի անդամներն արձանագրությունը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում իրենց վերջնական դիտողությունները և առարկությունները:
 29. Եթե ներկայացված առարկությունները անհնարին են դարձնում Հանձնաժողովի որոշումների ներդրումը, հրավիրվում է նոր նիստ, որի արդյունքները գրավոր հաշվետվության տեսքով ներկայացվում են ՀՀ Նախագահին:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՁԱՎՈՐՈՒՄԸ և ԴՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

30. Աշխատանքային խումբ ձևավորելու համար Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ Հանձնաժողովի քարտուղարություն է ներկայացնում մեկ թեկնածու:
31. Հանձնաժողովի քարտուղարն ի պաշտոնե Աշխատանքային խմբի ղեկավարն է: Հանձնաժողովի քարտուղարը վարում է աշխատանքային խմբի հանդիպումները:
32. Աշխատանքային խմբի հանդիպումները կազմակերպվում են Աշխատանքային խմբի ղեկավարի նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի առնվազն մեկ անդամի առաջարկով:
33. Աշխատանքային խմբի հանդիպումների օրակարգն ընդգրկում է առաջիկա Հանձնաժողովի նիստին քննարկվելիք հարցերը, ինչպես նաև ըստ անհրաժեշտության սույն Կանոնակարգի 3-րդ կետով սահմանված Հանձնաժողովի խնդիրներից բխող այլ հարցեր:
34. Աշխատանքային խմբի հանդիպումների օրակարգը և կից փաստաթղթերը Աշխատանքային խմբի անդամներին է ուղարկվում հանդիպումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:
35. Աշխատանքային խմբի հանդիպումներն արձանագրվում են, և դրանց արդյունքները ներկայացվում են Հանձնաժողովի նիստերին: